

# Սևուկը ադր ԶԷ

Ժամանակն է ներառել սևուկը  
ձեր կանաչ արկղերի մեջ:



Բըրբանքի քաղաքապետարանի սևուկի  
կոմպոստավորման ծրագրի ուղեցույց



[BurbankRecycle.org](https://BurbankRecycle.org)

# Սննդի թափոնները նպաստում են կլիմայի փոփոխությանը

## Մեղավորը: Մեթանը

- Մեթանը ջերմոցային գազ է, որը 84 անգամ ավելի հզոր է, քան ածխաթթու գազը՝ կարճ ժամկետում:
- Մեթանը արտադրվում է այն ժամանակ, երբ սննդամթերքը և այլ օրգանական նյութերը դանդաղորեն փչանում են աղբավայրում:

Կալիֆորնիայի աղբավայրերը ամենախոշոր մեթան արտանետող աղբավայրերից են՝ հիմնականում աղբ նետվող սննդամթերքի և օրգանական այլ նյութերի պատճառով: Այնուամենայնիվ, սննդի թափոնների խնդիրը լուծելը բնապահպանական առումով ամենահեշտն է, երբ գիտակցում ենք դրա արժեքը և ընդունում ենք նոր տվողություններ:

Այդ պատճառով սնունդը նոր «կանաչ» է, ինչպես կանաչ արկղի պարագայում:

## Օրգանական նյութերի պարտադիր վերամշակում

Բրդբանքի քաղաքապետարանն այժմ պահանջում է, որ սննդի մնացորդները, սննդամթերքով աղտոտված թուղթը և այգու կանաչ թափոնները ներառվեն կանաչ արկղերի մեջ՝ շահավետ վերօգտագործման համար:



Բրդբանք քաղաքը հետևում է Նահանգի Նոր օրենքին՝ Սենատի օրինագիծ (SB) 1383-ին, Կալիֆորնիայում կլիմայի կարճատև աղտոտիչների նվազեցման ակտին, որի նպատակն է նվազեցնել սննդի թափոնները, պահպանել աղբավայրերի կարողությունը և լուծել կլիմայի փոփոխությունը հետևյալ մեթոդների միջոցով.

- Վերահղում՝ օրգանական նյութերը աղբավայրերից հեռու պահելը՝ կոմպոստացման, Էներգիայի վերականգնման և այլ զարգացող տեխնոլոգիաների միջոցով
- Վերաբաշխում՝ մարդկանց կերակրում ձեռնարկություններից ուտելու ենթակա սննդամթերք հավաքելու և վերականգնելու միջոցով:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝  
**[CalRecycle.ca.gov/climate/slcp](http://CalRecycle.ca.gov/climate/slcp)**.

# Կանաչ աղբարկղի սննդի թափոնի հավաքման ծրագիր

Եթե աճում է, ուրեմն այս արկղի համար է: Օրգանական թափոնները պետք է նետել կանաչ աղբարկղի մեջ, որն այնուհետև կոմպոստացվելու է արդյունաբերական հաստատությունում, որը հագեցած է տարբեր օրգանական նյութեր ընդունելու համար:

## Օրգանական թափոնները ներառում են.

- Սննդի բոլոր մնացորդները, ներառյալ՝ կենդանական ծագման մթերքը (միս, ոսկորներ, կաթնամթերք, ձվի կեղև)
- Սուրճի մրուր և թեյի օգտագործված տերևները (թեյի պլաստիկ տոպրակներ չի կարելի)
- Սննդամթերքով աղտոտված թղթե արտադրանքը (առանց պլաստմասե երեսպատման)
- Այգու կանաչ թափոններ
- Ճամբարի թափոններ, ներառյալ ճյուղեր (չմշակված փայտ)

Երբ կասկածում եք, պարզեք:



[WheretGoes.burbankca.gov](http://WheretGoes.burbankca.gov)

Ուշադրություն. Բազմընտանիք (բազմաբնակարան) շենքերի բնակիչների համար, որոնք սպասարկվում են մասնավոր բեռնափոխադրողի կողմից, օրգանական նյութերի հավաքման կանոնները կարող են մի փոքր տարբեր լինել: Հրահանգների համար դիմեք գույքի կառավարման պատասխանատուներին կամ ստուգեք թափոններ տեղափոխողի վեբկայքը:

## Նայեք կափարիչին

Բըրբանքի քաղաքապետարանն անցնում է նոր հիմնական գունային սխեմայի՝ ցանկացած նոր կամ փոխարինվող աղբարկղերի համար: Հետևաբար, եթե տեսնում եք գունավոր կափարիչով սև արկղ, դա նույնն է, ինչ հին գունավոր արկղերը:

- **Կանաչ = Կոմպոստ (օրգանական)**
- **Կապույտ = Վերամշակում**
- **Սև = Աղբարկղ**







Բրբանքի քաղաքապետարանը բնակիչներին առաջարկում է անվճար սննդի մնացորդների հավաքման արկղ, որը բաշխվում է միջոցառումների ժամանակ և Բրբանքի վերամշակման կենտրոնի գրասենյակում: Յուրաքանչյուր տան համար տրամադրվում է մեկ արկղ: Մանրամասների համար այցելեք [BurbankRecycle.org](http://BurbankRecycle.org):

## Կերակրեք դույլը, ոչ թե աղբը

Կարևոր է խոհանոցում կափարիչով հարմար տարա օգտագործել՝ շաքաթվա ընթացքում սննդի մնացորդները հավաքելու համար: Օրգանական նյութերի հավաքման օրը սննդի մնացորդները դրեք կանաչ կափարիչով արկղի մեջ՝ առանց տոպրակի, կամ թղթե տոպրակի մեջ: **(Պլաստիկ տոպրակները չեն թույլատրվում, նույնիսկ նրանք, որոնք վաճառվում են որպես «կոմպոստավորման ենթակա»):**

Օգտակար խորհուրդներ սննդի մնացորդներն արկղերում հավաքելու համար.

- Մաքուր տարայի կամ դույլի մեջ մի թեթև սողա ցանեք, որը կօգնի վերացնել հոտերը:
- Հեռացրեք ապրանքների կաջուն պիտակներն ու պլաստմասսաները:
- Սննդի մնացորդները դրեք թղթե տոպրակի մեջ, կամ դույլի մեջ թերթ դրեք՝ խոնավությունը կլանելու համար:
- Հնարավորության դեպքում սննդի մնացորդները պահեք սառնարանում կամ սառցարանում (հատկապես կենդանական ծագման մթերքները):
- Դատարկեք սննդի մնացորդները կանաչ արկղի մեջ (տեսեք «Կանաչ արկղի նախապատրաստում» բաժինը):
- Լվացեք տուփը կամ դրեք այն աման լվացող մեքենայի մեջ:

## Կանաչ արկղի նախապատրաստում

1. Ձեր օրգանական աղբի արկղը մաքուր պահեք՝ ավելացնելով հավաքված խոհանոցային օրգանական նյութերը և սննդի մնացորդները (առանց տոպրակ կամ թղթե տոպրակի մեջ) ձեր աղբահավաքման օրը, գերադասելի է սառեցված վիճակում:
2. Մնունը դրեք այգու կանաչ թափոնների վրա, ապա ծածկեք աղտոտված թղթով կամ մնացած այլ լանդշաֆտային նյութերով:
3. Եթե չունեք լանդշաֆտային թափոններ, ստեղծեք պատտեղ, ինչպես օրինակ թերթերը կամ պիցցայի կեղտոտ տուփը, մնունդն ավելացնելուց առաջ:



# Կոմպոստի աղտոտվածության կանխարգելում

Բրդախնայի քաղաքապետարանը կոմպոստավորելու է հավաքված օրգանական նյութերը, այնպես որ պլաստմասսե և այլ աղտոտիչները հեռու պահեք: Կոմպոստը հաճախ օգտագործվում է գյուղացիական տնտեսություններում, ուստի կարևոր է նրանց որակյալ, մաքուր նյութեր մատակարարել:

**Կանաչ արկղերում արգելված իրեր.**

- Պլաստիկ տոպրակներ\*
- Կոմպոստացվող պլաստմասսա\*
- Փաթեթավորում
- Սննդամթերքի պլաստմասսե տարա
- Սննդի կաշուն պիտակներ
- Սպասք
- Ձեռնոցներ
- Կենդանիների թափոններ
- Աղբ




\* Կոմպոստացվող պլաստիկները խնդիր են. Պլաստիկ տոպրակները և «կոմպոստացվող» կամ «կենսապլաստիկ» պիտակավորված պլաստմասսա սննդամթերքը չեն ընդունվում քաղաքապետարանի կանաչ արկղերի օրգանական նյութերի հավաքման ծրագրում, քանի որ այս նյութը կոմպոստացման կոմերցիոն գործողության ժամանակ այդքան արագ չի քայքայվում: **Սրանք աղբ են:**



Բրդախնայի քաղաքապետարանը կունենա աշխատողներ, որոնք տեղում կստուգեն արկղերը և կօգնեն նվազեցնել շփոթությունը և ուղղել սխալները:

## Ուսուցանեք ձեր այգեպանին՝ կանաչը մաքուր պահելու համար

Փողոցների և մայրերի աղբը, ներառյալ այն աղբը, որը հավաքվել է բակում աշխատանքից հետո մաքրելու համար փռելով օգտագործելիս, երբեք օրգանական արկղի մեջ չեն նետվում: Բրդախնայում բակի աղբը փողոց նետելը (ինչն արգելված է 4-2-304 քաղաքային օրենսգրքով) առաջացնում է ինչպես կանաչ արկղերի աղտոտում, այնպես էլ հեղեղաջրերի աղտոտում: Համոզվեք, որ ձեր այգեպանը տեղյակ լինի, որ կանաչ արկղի մեջ նետում են միայն բակի մաքուր թափոնները:



# Արժեվորեք սնունդը և սկազեցրեք թափոնները

Երբ սկսեք հավաքել սննդի մնացորդները, պարզ կդառնա, թե որքան եք վատնում, հատկապես ՓՈՂԸ: Նպաստեք սննդի պահպանմանը՝ հետևյալ պարզ խորհուրդների միջոցով:

- Որպես հիշեցում, ձեր սառնարանում ստեղծեք «առաջինը ուտելու» բաժինը:
- Պլանավորեք առաջիկա կերակուրները՝ հիմնվելով ձեր ձեռքի տակ եղած սննդի վրա:
- Իրատեսական եղեք, թե ինչ եք պատրաստելու և երբ:
- Պատրաստեք կրկնակի խմբաբանակներ և սառեցրեք հավելյալները՝ հետագայում օգտագործելու համար:
- Գիտակցեք, որ «պահպանման ժամկետները» կապված են մարքեթինգի, այլ ոչ թե փշանալու հետ: Սնունդը դատեք ինքներդ:
- Գտեք եղանակներ՝ նորից օգտագործելու կամ փչացնելուց խուսափելու համար, օրինակ՝ կանաչ թափոնները պաշարելը կամ արտադրանքը սառեցնելը՝ սմուգի պատրաստելու համար:
- Կտրեք փտած ապրանքի արտաավոր մասերը և վայելեք մնացածը: Սննդի վիճակի մասին դատեք ինքներդ:
- Սովորեք սիրել սննդի մնացորդները:
- Սովորեք պահածոյացման, թթու և մուրաբա պատրաստելու հմտություններ:
- Հարևանների և ընկերների հետ կիսվեք հավելյալ հացաբուլկեղենով և այգիների ավելցուկ արտադրանքով:

Սննդի խնայողության  
վերաբերյալ ավելի շատ  
խորհուրդների համար այցելեք՝

**SAVETHEFOOD.COM**



«Գնումներ կատարեք ձեր սառնարանում»  
և նախքան ձեր գնումների ցուցակը սկսելը  
ստուգեք ձեր մթերանոցը:

# Պրոֆեսիոնալ խորհուրդներ բնակիչների համար

Բազմաթիվ բնակիչներ արդեն նորարարական ուղիներ են գտնում իրենց պարենային ներդրումները խնայելու համար՝ միաժամանակ նվազեցնելով թափոնները: Burbank Waste Warrior-ի շրջանավարտ անդամները ուրախ են առաջարկել իրենց սիրելի խորհուրդները սնունդը խնայելու վերաբերյալ:



**Ջինա.** «Դուք կարող եք գրեթե ամեն ինչ օգտագործել պիցցայի համար: Փորձեք բաղըր կամ կծու պղպեղ, թթուներ, հումուս, մսի մնացորդներ, պահածոյացված ձուկ, թարմ կամ եփած բանջարեղեն և ցանկացած տեսակի պանիր (սույնիսկ կաթնաշոռ):»



**Իզաբել.** «Ուտելիքը ճիշտ պահելը երկարացնում է դրա կյանքը: Սառնարանում մի բաժակ ջուրը կարող է պահել խոտաբույսեր, հազարի ցողունների գլուխներ, գազար, նեխուր և այլ մթերքներ: Պարզապես 3-5 օրը մեկ ջուրը փոխեք»:

**Թայլեր.** «Թառամած լոլի՜չ կամ համեմ: Ոչ մի խնդիր: Ամեն անգամ, երբ սառնարանում ունեմ ապրանք, որի ժամկետը լրանում է, ես պարզապես սառեցնում եմ այն և օգտագործում այն հաջորդ անգամ, երբ պատրաստում եմ թարմ սալսա, սոուս կամ ապուր: Նման մթերքներին ոչ այնքան թարմ մթերք ավելացնելը փրկում է այն թափոն դառնալուց և չի ազդում համի վրա»:





# ՎերաՄՏԱԾԵԼ. Կրճատել, վերօգտագործել, ապա վերամշակել

Սնունդը թափելը պարզապես թանկարժեք ռեսուրսների վատնում է, դա փողի վատնում է: Չորս հոգուց բաղկացած ընտանիքը տարեկան \$1,500 է ծախսում այն սննդի վրա, որը չեն սպառում: Լավ տրոփությունն այն է, որ սննդի վատնումը այն խնդիրներից է, որը մենք կարող ենք լուծել: Դուք կարող եք՝

- Նվազեցնել՝ կանխելով սննդի թափումը:
- Վերօգտագործել՝ ավելացած սնունդը կիսելով համայնքի հետ: Ստեղծագործեք և գտեք սննդամթերքը մինչև փշանալը օգտագործելու այլ եղանակներ:
- Վերամշակել՝ մասնակցելով տեղական օրգանական նյութերի հավաքման ծրագրերին կամ կոմպոստավորեք տանը:

## Կոմպոստի պատրաստումը բալուժ. տնային լուծում

Ստեղծեք ավելի առողջ բնության տեսարաններ՝ բնության անվճար սննդանյութերով: Իմացեք, թե ինչպես պատրաստել կոմպոստ՝ Լոս Անջելեսի վարչաշրջանի Smart Gardening ծրագրի միջոցով: Կոմպոստի թեմայով անվճար վեբինարները և սեմինարները հասանելի են ամբողջ տարվա ընթացքում: Չեղչված գներով հասանելի են նաև կոմպոստի արկղերը: Տեղեկությունների համար այցելեք՝ [SmartGardening.com](http://SmartGardening.com)



*«Այնքան ռեսուրսներ են պահանջվում սնունդը աճեցնելու, տեղափոխելու, պահելու, եփելու և մեր ափսեի մեջ հասցնելու համար: Երբ սնունդը թափում ենք, դրա հետ միասին վատնում ենք այդ ռեսուրսները»:*

*~ Dana Gunders, ReFED, գործադիր տնօրեն*

Բըրբանքի վերամշակման կենտրոն • 500 South Flower Street • Burbank, CA 91502 • 818-238-3900



[BurbankRecycle.org](http://BurbankRecycle.org)

[WhereItGoes.Burbankca.gov](http://WhereItGoes.Burbankca.gov)

[Facebook.com/BurbankRecycle](https://Facebook.com/BurbankRecycle)

[Instagram.com/BurbankRecycle](https://Instagram.com/BurbankRecycle)

«Սնունդը աղբ ՉԷ» ուղեցույցը հասանելի է խապաներեն և հայերեն լեզուներով: Ներբեռնեք այստեղ՝ [burbankca.gov/web/public-works/sb1383](http://burbankca.gov/web/public-works/sb1383)